ԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ։ Երեքին առնչի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ ղրկել Խմբագրութեան հասցեին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք հաս չեն տրուիր

R. P. Kalémcarian, Mechitharistengasse Vienne (Autriche) W. 4.

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԴՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՔԱԼԷ՝

Մինչ նեղ, քարուտ ճամբուն վրայ
Կըսպասէի անձկաքին,
Որ անկասկած պիտի չուտ դայ
Ազատութեան սուրբ ոգին։

Մինչ աչերըս երկինք յսուակ՝
Կը յուսայի ես անոր,
Որ տանի զիս լայնատարած
Դաշտերն հայոց նորանոր։

Ահա տեսայ որ ճամբուն մօտ
Դաժան, հսկայ կին մը՝ ծեր
Ժայռին վրայ իր արիւնոտ
Մատով «Կռիւ՝» կը գրծէր։

«Ատելութիւնն եմ ես, ըսաւ,
Կռուին մայրը հպարտ, սեգ,
Զունիմ արցունք և ոչ ալ ցաւ,
Ու չունենամ պիտ՝ երբեք։»

«Քալէ՝ առաջ, յոյսի զաւակ,
Թէ կը տեսնըս Հայրենիք,
Անարգանքի դու նշաւակ
Կըլլաս կանգնած հոս մենիկ։»

«Վիշտդ ծով է, դուն ժայռ եղեր,
Հըղօր ժայռը զայրոյթին,
Որ քեզի դէմ փոթորկալիր
Ալիքները խորտակուին։»

«Վառ յոյսերըդ, որ կը դընես
Օտարներուն, թո՛ղ ցընդին,
Արի՛ փոխ տամ քեզ իմ թոյնէս,
Որ մահ սրփոէս քու չորս տին։»

«Հոսեցընեմ հոգիիդ մէջ,
Իմ վրէժս, իմ ոխ, քէն,
Զիս մըրրկող յաւէտ անշէջ,
Անագորոյն դըժոխքէն։»

«Կռուի՛, արի՛ւն, ալ թո՛ղ թնդան
Հայ դէնքերը մահաբեր,
Թէ չէ իզուր հոս յաղթութեան
Կըսպասես դուն անհամբեր։»

«Քալէ՝ քարուտ լեռներն իվեր՝
Կարմիր ճամբէն անվրդով,
Դրծեցին զայն հայ անձնուէր
Քաջերըն իրենց արիւնով։»

«Քալէ առաջ դուն անդադար,
Եթ մի՛ դառնար, օ՜ն, քալէ՝,
Բա՛ւ է, դադրէ՝ ալ անարդար
Լուծի ներքեւ տքալէ։»

. . . . . .

Եւ ես տեսայ որ ճամբուն մօտ
Դաժան, հսկայ կինը՝ ժիր
Ժայռին վրայ դեռ արիւնոտ
Մատով «Կռիւ՝» կը գրծէր։

Վէտա

25 հոկտ. 1903
Շումլա

ՆՈՐ ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԵՌԱՆԴ

Կան վայրկեաններ, ուր մարդ առօրեայ կեանքէն դուրս գալով, հոգու աչքերով կը տեսնէ իտէալը ու անոր առջեւ կրզգայ սրբազան սարսուռ մը։ Այս վայրկեանները իրենց մէջ կը պարունակեն լուսաւոր միտք մը, որու հետեւելով անմահացան ազգերու դիւցազունները և մատուցին իրենց պատկանած հասարակութեան գնահատելի ծառայութիւններ։

Այսպէս վայրկեաններ ապրեցանք մենք, Վառնայի հայերս, անցեալ կիրակի Սաէտինէնիյէ սրահին մէջ, ուր մեծ բազմութեամբ հաւաքուած էինք Սգահանդէս կատարել իյիշատակ Ռուսահայաստանի մէջ ինկած քաջերու և հանգիստ մաղթել նահատակներու ոսկորներուն։ Հոն —հակառակ հասարակական դիտութիւնները չարչարող կարգ մը հայ սօցիալիստներու դրած օրէնքին—ամէնքս ալ մոռցած էինք վաղուան հացը և ելեկտրականացած մեծ գաղափարով մը —Հայութեան գաղափարովը։

Պատմութիւնը կընթանայ անփոփոխելի օրէնքներով, քաղաքակրթութիւնը կը յառաջադիմէ աստիճանաբար։ Վաղահաս միտքերը կը մերժուին և չեն գըտներ արձագանք։ Լուտերի եկեղեցական բարեռորոգման ատեն երեւան եկան կոմիունիստներ, բայց որովհետեւ կոմիունիզմը այն ատեն դեռ վաղահաս միտք մըն էր, չը հասկցուեցաւ և անհետեւանք կորսուեցաւ, մինչդեռ Լուտերի գերման ժողովուրդին ուղղած կոչը այդ ընդարձակ պետութեան մէկ ծայրէն միւսը արձագանք տուաւ և կայծակի արագութեամբ նուաճեց իրեն համար ամբողջ երկիրներ։

Մածծինի և Կարիպալտի երկուքն ալ հանրապետականներ էին։ Մածծինի յաջողութիւն չը գտաւ, որովհետեւ Իտալիան այն ատեն հանրապետութիւն մը չէր որ կուզէր, այլ կը ցանկար ձեռք բերել ազգային անկախ և ինքնուրոյն կեանք։ Կարիպալտի իր վարպետէն աւելի խելացի գըտնուելով անցաւ այս շարժման գըլուխը և իր ձեռքով արքայական թագը դրաւ Վիկտոր Էմմանուէլ գլխին, չնայելով, որ ինք թունդ հանրապետական մըն էր։ Ինչպէս այն ատենները Իտալիան, այսօր ալ հայը կըգտնուի պատմական վարգացումի նոյն աստիճանին վրայ և ընդդրկած է ազգութեան գաղափարը, որը պաշտպանելու համար նա այսօր կըռուի դուրս եկած է Զարի ու Սուլթանի կազմակերպուած բանակներուն դէմ, և որով մենք լեցուած էինք անցեալ կիրակի մեր համախմբման միջոցին։ Բայց որովհետեւ մեր կռիւը հանդչի յաջող ելքի մը պէտք է մենք ազգովին յեղափոխուինք։

Անգլուխ ամբոխը սակայն թէև շատով կալեկոծուի, բայց շատով ալ ղեկը կը կորսնցնէ։ Ուրեմն ո՞վ պիտի ըլլայ մեր Կարիպալտին, որ վստահ քայլերով մեզ առաջնորդէ դէպի յաղթանակ։

Դիտենք մեր շուրջը ու հոն կը գտնենք ուժեղ կազմակերպութիւն մը, որ ժամանակի և պատմութեան պահանջին համեմատ դրուած ազգային —յեղափոխական ամուր հիմերու վրայ, կոչուած է մեկ կրակի ու սուրի մէջէն առաջնորդել դէպի ցանկալի նպատակը։ Այդ կազմակերպութիւնը Հ. Յ. Դաշնակցութիւնն է։ Ուրեմն ազգովին հաւաքուինք անուր շուրջը և աշխատինք հայութեան դատին համար թէ Կովկասի և թէ Թուրքիոյ մէջ։ Թշնամին մէկ էր, այսօր երկուք դարձաւ, մենք ալ կրկնապատկե՛նք մեր ուժերը ու ապագայի վառ յոյսով թափենք մեր քըրտինքը...։

Ուրեմն նոր ոգեւորութի՛ւն, նոր եռա՛նդ։

Մարզպետունի

ՍԳԱՀԱՆԴԷՍԸ

Որքան ալ Հայութիւնը ենթարկուած դարեւոր դերութեան ու անվերջ հալածանքներու ազդեցութեան տակ զգալիօրէն թուլցած, այլասերած ըլլայ, իրողութիւն մըն է սակայն սա պարզան, որ թշուառութեան բաժակը դառնօրէն ճաշակած այդ ժողովուրդը իր հոգեկան մութ աչքերուն մէջ ամրօրէն պահած պահպանած է իր գոյութիւնը ապահովող անխախտելի սկզբունքները, զորս խլելու համար փոթորիկներ պէտք է յարուցանել եւ աւերումներ իրագործել։ Հսկայ ու բարձրաբերձ լեռան մը կուշտին կպած լերկ ու այրիացած ժայռին պէս, որ դարերու աւերումներուն յաղթականօրէն կուրծք տալէ ետքը երբ անգամ մը անջատուի իր ահեղ տապալումին մէջ անէութիւնը կը դղրդեցնէ եւ անթիւ կեանքեր կը տապալէ։ Հայ ժողովուրդն ալ այս միջոցիս, իր սրտին է՛ն փափուկ թելերէն զարնուած, քանջնջումի եւ կորստեան միւնոյն սարսափէն կը հիպնոսանայ ու անվախօրէն կը վճռէ բացարձակ կռիւ մղել ռուսացումի ուրուականէն մտրակուած հիւսիսի արու արջին դէմ, եւ իր տապալումին մէջ, եթէ երբեք անխուսափելի ըլլայ ան, գոնէ առելի փոթորիկներ յարուցանել, որոնք հիւսիսէն հարաւ ու արեւելքէն արեւմուտք մրրկոտեն ու լափեն, լափլիզեն գազանութեան գարշելի գէշը։

Կատաղութեան ու վրէժի նոյն կիրքերն էին, որ հրեղէն բոցերու պէս արագօրէն ճարակելով հայութեան բոլոր սրտերուն մէջ, մղեցին զմեզ զէթ, հեռուէն հեռու, համակրանքի եղբայրական համբոյրով մը ողջագուրելու անվեհեր կռուողները եւ մեր հոգւոյն ամենէն բուռն մաղթանքներն ուղղելու նահատակ ու կենդանի քաջերուն։

Այս տեսակէտներով է, որ մեր աչքին առջեւ կը մեծնայ անցեալ կիրակի օրուան կատարուած Հոգեհանգիստը եւ Սգահանդէսը։

Եկեղեցին, լեցուած երկսեռ խուռն

բազմութեամբ, ազգային սուգի մը խորհրդաւորութիւնը կը պատկերացնէր։ Հոգեհանգիստի արարողութեանց միջոցին արդէն ամբողջ ֆաները լուսավառուած էին եւ ամբոխը աղէտին մեծութենէն եւ ընդդիմութեան ուժէն գինովցած՝ սրտովին կօրհնէր կռուող քաջերու յիշատակը։ Դուրսը սուգի սեւ շղարշներ դուռները պատած էին եւ ազգային եռագոյն դրօշակներ նոյնպէս սեւ շղարշներով եզերուած, վարժարանին պատուհաններուն առջեւ կը ծածանէին։ Եկեղեցին աւարտելէ վերջ դպրոցի աշակերտները եւ աշակերտուհիները կարգեր կազմած եւ առաջնորդուելով ուսուցչուհիներէն եւ ուսուցիչէ մը շարժուեցան դէպի «Սատինէնիյէ» սրահը։ Առջեւէն կը տարուէր պուլկարական դրօշակը։ Աշակերտ մը եւ աշակերտուհի մը կարգին մէջտեղէն կը տանէին երկու ազգային դրօշակներ, որոնք սեւ շղարշներով եզերուած էին։ Խումբին հետեւը օդին մէջ տխրօրէն կը ծածանէին երկու սեւ դրօշակներ։

Հարկ չիկայ ըսել որ սրահը մէկ վայրկեանի մէջ խուռներամ բազմութեամբ մը լցուեցաւ։ «Ցէր կեցո»էն ետքը, զոր աշակերտները երգեցին, Պ. Մարգպետունի բացաւ հանդէսը եւ խօսքը տուաւ Պ. Խուշպուլեանին։ Իր առաջնախօսութեան մէջ որ բաւական երկար տեւեց, Պ. Խուշպուլեան յստակօրէն բացատրեց ռուս քաղաքականութեան իսկզբանէ անտի հայերուս հանդէպ բռնած ընթացքը, մերթ սիրաշահող, մերթ նոյն իսկ քծնող, բայց միշտ կեղծաւոր ու վերջապէս սպառնական։ Առաջնախօսը ցոյց թէ՝ մինչ հայերը ռուսական շնորհներէն ու խոստումներէն գինովցած՝ իրենց հաճոյակատարութիւնը մինչեւ անձնուիրութեան կը մղէին եւ իրենց արդար արիւնով վաստակած շնորհներն իսկ ռուս կայսրերու բացառիկ համակրութեան կը վերագրէին, անդին ռուս կայսրերը միմիայն իրենց իշխանութիւնը Կովկասի մէջ ամրացնելու հոգ կը տանէին, իրր ժամանակաւոր գործիք ծառայեցնելով հայ տարրը։ Հայերը իրենց գինովութեան մէջ նոյնիսկ չզգացին Վրացիներու հանդէպ Ռուսաց բռնած ընթացքին պարունակած դաւերը, ու չի խորհեցան, որ միեւնոյն ընթացքը ուշ կամ կանուխ իրենց ալ պիտի վիճակուի։ Իսկ ապերախտ արջը տեսնելով թէ հայերը անլուծելի տարբ մը կը կազմեն հարուածներ հարուածներու ետեւէ հասցուց։

Յետոյ Պ. Խուշպուլեան խօսեցաւ Ռուսահայ եւ Թրքահայ երկու մեծ հատուածներուն ամբողջ հայութեան համար ունեցած նշանակութեան վրայ, պարզեց անոնց փոխադարձաբար ունեցած կապերն ու պարտականութիւնները եւ եզրակացուց, որ Թրքահայոց ազատումը միակ կարելին ու անհրաժեշտն է հիմայ, եւ անկէ միայն կրնանք յուսալ ռուսահայոց ալ փրկութիւնը, որուն անմիջական վտանգ կրսպառնայ։ Ուրեմն պէտք է ամէն ուժ այդ կէտին վրայ ամփոփուի։ Երկրորդական մրտահոգութիւնները պէտք է այս բոպէիս յետին կարգը ձգել ու միակ նպատակի մը ետեւէ ըլլալ։ Այս բանին աշխատող կուսակցութիւններ կան։ Ըստ Պ. Խուշպուլեանին, ինչ թերութիւններ ալ ներկայացնեն անոնք, պէտք է դարձեալ պահուին ազգին կողմէ, որովհետեւ մեր բոլոր յոյսը անոնց վրայ է։ Թերութիւնները կրնան շտկուիլ, անորմէ խրատ չելով, լքանելու չէ զանոնք։

Այս երկար ճառին մէջ, որուն կարգ մը կէտերուն երկարաբանութիւններն ու կրկնութիւնները խիստ տաղտկացուցիչ էին, Պ. Խուշպուլեան դիտակցաբար եւ կանխապատրաստութեան մը համեմատ, անչուշտ, հակասութիւններու մէջ ինկաւ։ Ընդունելէ յետոյ որ ներկայ կուսակցութիւնները ինչ դիրքեան մէջ ալ ըլլան, պէտք է պահուին, յայտարարեց որ այդ դիրքեան մէջ վնասակար են անոնք, քանի որ չեն կրնար զմեզ ապահովել, ազգին բոլոր ուժերը համախմբելու կարող ըլլալնուն։ Հետեւաբար պէտք է միանան։ «Ժողովո՛ւրդ, ձգեցէք կրաւորական դերը, միութիւն պահանջեցէք», աղաղակեց Պ. Խուշպուլեան։ Խեղճ ժողովուրդ, զոր ամէն բանի մէջ կը խոթեն եւ որ ոչ մէկ բանէ տեղեկութիւն ունի։ Բարեբախտաբար այդ «ժողովուրդն» ալ տեսաւ միութեան բոլոր խայտառակութիւնները եւ ինչ կըսե՛մ, բոլոր սարսափելիութիւնը։

Պ. Խուշպուլեա՛ն, ի՞նչ կը նշանակէ ազգին բոլոր ուժերը համախմբել, բացատրութիւնը, բառերու հետ կը խաղա՞ք եւ կուզէք դեռ օրօրներո՞վ խաբել հասարակութիւնը, ամօթ չէ՞ դեռ այդ ցնորքին մէջ յամառիլ ու իրողութիւնը ուրանալու փորձ ընել։ Ո՞ր միութիւնը կրնայ ձեր ուզած ապահովութիւնը տալ ազգին բոլոր ուժերը համախմբել կարենալուն։ Ամէն կազմակերպութիւն անձերով կը կառավարուի, ամէն անձ իր հակառակորդը կունենայ, անձնապէս կամ գաղափարական, ամէն հակառակորդ իր գաղափարականները, որոնք ապահովաբար արգելք պիտի ըլլան ազգին բոլոր ուժերուն համախմբման։ Ի՞նչ կազմակերպուած տէրութիւնները օրինակ կը բերէք։ Հոն օրէնք կայ եւ ի հարկին պատիժ։ Բայց առէք յեղափոխական ընկերութիւնները իրր օրինակ։ Յոյները երբ մէկ ձեռքով տաճկաց դէմ կը կռնուէին, միւսով՝ զիրար կըսպաննէին։ Պուլկարները նոյնը ըրին Ռումանիոյ մէջ։ Նոյնը պատահեցաւ Ֆրանսական մեծ յեղափոխութեան մէջ։ Ինչո՞ւ ուրանալու չափ կ'անգիտանաք այս բոլոր երեւոյթները, դուք՝ որ ընկերաբանական գիտութեանց այնքան սիրահար կը նկատէք ձեզ։ Ղեկը կորսնցուցած նաւաստիի մը չէ՞ք նմաններ, որ երկկոսցիալիզմի մէջ միայն կը գտնէր հայուն փրկութիւնը։ այսօր միութիւն բառին մէջ կը կծկի ու վաղը՝ վ գիտէ որուն գիրկը պիտի նետուի։ Պ. Խուշպուլեա՛ն, մի մոռնաք, որ հայութիւնը ունի Հ. Յ. Դաշնակցութեան պէս յեղափոխական ուժեղ մարմին մը, որ իր մէջ ձուլած է այսօր բոլոր յեղափոխական ուժերը։ Մի մոռնաք հնչակեան այն ստուար խումբերը, որոնք 96ի պառակտման ատեն Դաշնակցութեան դրօշին տակ մնան։ Աւելորդ է անոր գոյութիւնը ուրանալ։ միանալ կը նշանակէ այսօր Դաշնակցութեան հետ նոյնանալ։ Անկէ դուրս մնացողները արդէն անպէտք են ու վնասակար, որոնց հետ ալ Խուշպուլեան միութիւն մը՝ միայն աղէտներ կրնայ ծնիլ, եւ յեղափոխութեան ու ազգին կորուստը փութացնել։ Պ. Խուշպուլեան չէ՞ր հընչակեան միութիւնը իրագործողներէն մին, որուն եզբայրասպան վարմանը այսօր զզուանք կը պատճառէ ամենուս։

Պ. Խուշպուլեա՛ն, չի խաբուինք եւ մանաւանդ խաբուիկ ֆրազներով չը շփոթենք ամբոխին միտքը։

* * *

Պ. Խուշպուլեան ունի խօսելու շնորհք, բայց պէտք է զգուշանայ կրկնութիւններէ եւ երկարաբանութիւններէ, որոնք միայն ձանձրոյթ կը պատճառեն։

Պ. Խուշպուլեանի ճառէն վերջ աշակերտներու երգեցիկ խումբը երգեց «Ի զէն Հայերը»։ —

Յետոյ բեմ բարձրացաւ թերթիս փոխ-խմբագիր Պ. Մարգպետունին եւ ընարան ընտրելով երգին վերջի տողը ոգեւորիչ շեշտով մը ըսաւ. «Սուլթան եւ Զարը յաղթուած են, կեցցէ՛ Հայաստան»։ (ծափահարութիւններ)։ Պ. Ճառախօսը ընդլայնեց այդ տողերուն իմաստը եւ ցուցուց հանդիսականներուն՝ թէ հակառակ ջարդերուն, ամէն տեսակ հալածանքներուն հայ ազգին տոկութիւնը, ծնած հերոսները, յառաջ բերած ընդդիմութիւնը եւ ապստամբական ոգին, որ օրէ օր աւելի ծաւալ կը գտնէ, Հայութեան մօտաւոր յաղթանակը կ'աւետեն։ Յետոյ Պ. Մարգպետունի բրաւ պատմական տեսութիւն մը եւ մի առմի յիշատակեց հայոց մատուցած ծառայութիւնները ռուս կայսրերուն եւ անոնցմէ իրր փոխարինութիւն գտած ապերախտութիւնները։ Ծանրացաւ մասնաւորապէս վերջին դէպքերուն վրայ եւ ցուցուց հոս ռուս կառավարութեան անխղճութիւնը ու հրէշային գաղանութիւնները։

Յետոյ անցնելով Թրքահայ յեղափոխական գործունէութեան ցուցուցայն հանգունութիւնը, որ կայ երեկուան կռուին եւ այսօրուան Ռուսահայ ընդդիմութեան մէջ։ Այստեղ Պ. Ատենախօսը կանգ առաւ եւ կըրակոտ շեշտով մը ըսաւ. «Այն ազգերը, որոնք իրենց մայրական արգանդէն հերոսներ կը ծնին, երբէ՛ք չեն մեռնիր. չը մեռաւ Իտալիա, որովհետեւ ծնաւ Կարիպալտի մը, չը պիտի մեռնի մանուկ Հայաստանը, որովհետեւ ան ծնաւ Սերոբներ, տուաւ Պանքի, Սամաթիոյ հերոսները, եւ այսօր Կովկասի մէջ ինկող նահատակները, որոնց թանկագին ոսկորներուն հանգիստ մաղթելու հաւաքուեր ենք մենք այստեղ։»

Պ. Ատենախօսը խօսքը ուղղեց Պուլկարահայոց եւ հարցուց. «Պուլկարահայերդ ալ տուա՞ծ էք հերոսներ, դուք ալ ունի՞ք իրաւունք կեանքի պայքարին մէջ ինքնուրոյն գոյութիւն պահպանելու։»

Հարցումին դրական պատասխան գտաւ եւ յիշատակեց անմոռաց Պետրոս Սէրէմճեանի քաջութիւնները ու աւելցուց. «մէկ ծաղիկով սակայն գարուն չի գար, Պուլկարահայե՛ր, որովհետեւ դուք մեր ազատագրութեան ներկայ պայքարին մէջ տաք ուրիշ հերոսներ՝ պէտք է միշտ սրբազան սարսուռով մը յիշատակէք Պետոի անունը։ Թող պատմէ՛ ամէն մայր իր զաւկին Պետրոս Սէրէմճեանի սխրագործութիւնները, թող պատմեն քոյրերը իրենց եղբայրներուն, որ այստեղ՝ մեր մէջ՝ կապրէր ջիւան երիտասարդ մը՝ չնորհալի եւ գեղեցիկ, որը իր մատաղ կեանքը զոհ բերաւ թշուառ ժողովրդին օգնելու համար։

Պ. Մարգպետունի յառաջ բերաւ Պետոի խօսքը «Գաղափարը չի մեռնիր» եւ եզրակացուց՝ թէ որքան ատեն այս հերոսներու շարքը գոյութիւն ունին եւ զանոնք վարող ընտիր կազմակերպութիւն մը կանգուն կը մնայ, հայ ազգը չպիտի ընկրկի եւ պիտի տանի վերջնական յաղթանակը թէ Կովկասի եւ թէ Տաճկահայաստանի մէջ։

«Անկցի՛ ռուսական բռնակալութիւնը, կեցցէ՛ ռուսահայ ընդդիմութիւնը» աղաղակներով փակեց Ատենախօսը իր ճառը։

Երգերու մէջ հանդէսը վերջացաւ եւ հասարակութիւնը ցրուեցաւ ըզգածուած ու լեցուած։ (*)

Ֆ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, 3 Հոկտ. 1903

Փոխուել է ժամանակը, փոխուել են մարդիկ։ Ես չեմ հաւատում թէ այդչափ էլ փոխուած լինեն նրանք, բայց իրականութիւնն այդպէս է հաստատում։

Իսկապէս տարօրինակ է, որ Եղիշէ Ծ. վարդապետ Մուրատեանն եւս այդչափ փոխուել է։ Նա որ մի ժամանակ այնչափ հակառակ էր լիրբ, փըճացած մարդերին և աշխատում էր մաքրել ասպարէզը այդպիսի ուտիճներից ու եէնիչէրիներից, այսօր ոչ միայն պաշտպանում, այլ և պաշտօն է տալիս, այն էլ ուստ ցյուրեան պաշտօն, ցաւալի է։ Շեշտում եմ, ցաւալին այն է, որ այդպիսին ուղարկուում է Ուրմի պէս մի տեղ, ուր ժողովուրդը դեռ չէ հասկանում լաւն ու վատը, ազնիւն ու անազնիւը, մի խօսքով բարին ու չարը։ Մարդ որչափ ընկած պէտք է լինի որ մի լիրի հալածելուց և նոյն իսկ երդուելուց յետոյ թէ «ինքն չը պէտք է թողնեմ նոյնիսկ Ուրմի գաւառում,» նրան պաշտօն տայ։

Ո՞ր է այն ժամանակը, երբ մեր հոգեւորականութիւնն ձեռք ձեռքի տուած ուսուցիչների հետ գործում էին յօգուտ ժողովրդին, իսկ ա՞յսօր։ —այսօր փոխուել է ժամանակը, փոխուել են մարդիկ։ Այսօր նրանք փոխանակ աշխատելու յօգուտ ժողովրդին, հարստահարում, չահագործում են նրան։ Իբրեւ փաստ բերենք մի նմոյշ։ Ոմն Յովհաննէս քահանայ Գասպարեան՝ Գեարդաբաղցի, միուսուսմնարան է շինում իրենց գիւղում, դրա ծախսը ծածկելու համար քանի անգամ հանգանակութիւն է լինում, բայց այդ քահանան դեռ պարտք կայ ասելով չահագործում է ուսումնարանը։ Նոյն գիւղի 1902-903 թուականի ուսուցիչը աշխատել է վերջացնել պարտքը և ազատել ուսումնարանը քահանաների ձեռքից, որոնք չահագործում էին և ուսումնարանը և ուսուցչին և աշակերտներին, բայց ոչ միայն չի յաջողում նա, այլ և իբրեւ անբարոյական՝ բողոքելով Թաւրիզ դուրս են արել նրան, որը հոգով մարմնով նուիրուած էր և աշ-

(*) Սգահանդէսի Ցանձնախումբը գործած է սխալ մը. այս առթիւ անտեղի էր միացնել Թրքահայ նահատակներու յիշատակի տօնումը, որովհետեւ այդ արդէն քանիցս եղած է և օրուան այրող հարցը եղող Ռուսահայ նահատակներու համար եղած տօնի ազդեցութիւնը տկարացնելու բնաւորութիւնը ունի։

Մ. Ց.

խատում էր բարեփոխել ամէն ինչ, այժմ ժողովուրդը նրան ուզում է, բայց իզուր։

Քահանան յաջողեցաւ, քշեց անցեալ տարայ ուսուցչին և նրա տեղ հաստատեց իր ուզածին, որի հետ արդէն յունուարից ծրագիր կազմած ապրիլին ուղեւորուեցին Թաւրիզ, ուրկից պիտի անցնէին Ռուսաստան, մի մեծ խաչագողութիւն անելու. բայց խափանուում է այդ դեղեցիկ ծրագիրը և ձեռունայն յետ են դառնում։ Այժմ այդ երկուքը ձեռք ձեռքի ուած շահագործում են ուսումնարանը և եկեղեցին։

Կեցցէ Եղիշէ Ծ. Վ. Մուրատեանը, որ այդ եղելութիւններին տեղեկացնելուց յետոյ, ոչ միայն այդ տէր խաչագողի մօրուսը չի խուզում, այլ և Ուրմիի գիւղերի համար գրքեր է տալիս որ բերէ բաժանէ, բայց այդ խաչագողը ցարդ պահել է իր մօտ։ Այս էլ մի ուրիշ գործիք և միջոց չահագործման։ Կրկին անգամ կեցցէ, որ իրեն վարիչ և ակառակ պրօպագանդ անող Տիգրան Օտեանին ուսուցիչ է նշանակում, որը անբարոյական, խեղկատակ, հացկատակ ու բախտախնդիր մէկն է։

Դե-սիլցի

---

25 հոկտ. Նիկոպոլ

Մեր նախորդ նամակով համառօտակի պարզեցինք մեր կարծիքը Բլէվնայի հայ գաղթականութեան մասին։

Այսօր պիտի գրեմ Ֆիլիպոպոլի և Սամսվիլիի ապգայիններու վրայ։

Սամսվիլիի մէջ կան 20-25 հայեր, որոնց մէկ կարեւոր մասը բեռնակրութիւն կընէ, իսկ միւս մասն ալ զանազան գործերով կըզբաղի։

Սակայն հակառակ գործերու չափազանց սակաւութեան՝ հոն եղող հայերը միշտ առատաձեռն գտնուած են գէպի հայ ազատագրութեան գործը։ Երանի թէ մեր բարեկեցիկ դասակարգը օրինակ առնէր անոնցմէ, որոնք իրենց չունեցածէն իսկ ազգային պարտականութիւնը կը կատարեն։

Նիկոպոլի մէջ կան 10-15 հայեր, որոնք բոլորն ալ առանց բացառութեան քիչ շատ դիրքի տէր են։ Հոս 1898ին կազմուած է մի ընկերութիւն «Ազքատախնամ» անունին տակ, որը այսօր 400 ֆր. ի մօտ դրամագլուխ մը ունի՝ շնորհիւ հոն տիրող սերտ համերաշխութեան։ Սակայն անդամներու մի կարեւոր մասը կը փափաքի յիշեալ դումարին գոնէ կէսը ղրկել Հ. Բ. Դաշնակցութեան։ Քանի որ այդ մարմինը իր լաւագոյն անդամներով եղող զազան բռնակալութեան դէմ անհաւասար կռիւ կը մղէ, ալ ո՞ր օրուան կը պահենք մեր դրամը։

Մթերը գովելի է... Յաջողութիւն։

Ճամբորդ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹԱՒՐԻԶՑԻՆԵՐԻՆ

Սրանք թէեւ օգտակար նախաձեռնութիւններ են, բայց դրական ո՛չ մի օգուտ են աւել ժողովրդին. սրանցից մի քանիսը դեռ մնում են լոկ նախափորձեր, գործի չեն վերածուել, միայն աչքեր են չլացնում... մի քանիսը ուրիշի ջանքերով են ձեռք բերուել, Եղիշէն միայն կրաւորական դեր է խաղացել, իսկ մի քանիսն էլ փոխանակ օգուտի, վնասներ են առաջ բերել։ Մի առ մի թուենք։

Կենտրօնական դպրոցի խնդիրը՝ Եղիշէից տասնեակ տարիներ առաջ՝ Թաւրիզցիներիդ մտածողութեան առարկան էր դարձած և այդ նպատակով նոյն իսկ դպրոցի կնիքն էլ փորագրել էիք աւել։ Շատ տարիներ առաջ Ղարատաղի Բարեսիրաց ընկերութեան մօտ հաւաքուած գումարով է որ Եղիշէն լրացրեց չէնքի արժէքի մեծ մասը՝ 3/4 ը, իսկ մնացածը դեռ չէ վճարուած, չէնքը օրինաւորապէս չէ գնուած և ազգը տակաւին սեփականատէր չէ այդ չէնքին։ Եթէ երբեք ազգը այդ չէնքին ապագայում տէր էլ լինի, դժուար թէ կենտրօնական դպրոցը բացուի, քանի որ նրա մատակարարութեան համար հաստատուն եկամուտներ լկան և առնուազն տարեկան 20.000 բուբլի է հարկաւոր։ Աւելորդ իսկ է այս մասին շատ ծանրանալ, արդէն դուք էլ ինձ նման էք մտածում և թէ ժամանակին «Մուրճի» և «Մշակի» մէջ մեր ասածը հաստատող գրուածքներ են լոյս տեսել։

Իսկ արագատիպ «Մամուլը» ձեռք է բերուած ոչ թէ Եղիշէի ջանքերով, այլ միմիայն Արժ. Տ. Եղիշէ քահանայ Դեղամեանցի ջանքերով, որը համոզել է Միրզաբէկեանցին, ի յիշատակ իր վաղամեռիկ Եղիսաբէթ աղջկան նուիրել այդ մամուլը Ատրպատականի թեմին։ Եղիշէն Բագուում մի քանի անգամ քարոզներ է խօսել այն յոյսով, որ արագատիպի և կենտրօնական դպրոցի համար հարուստներից փող կըստանայ, բայց հարուստները երեւի նրան մեղանից աւելի լաւ ճանաչած լինելով, չեն վստահանում փող տալ։ Եղիշէն կատաղած, Բագուեցի հարուստների հասցէին զայրոյթով լի մի նամակ է գրում «Մշակ»ի մէջ... Եղիշէն իր գողացած փառքը չը նսեմացնելու համար, Արագատիպի օրհնութեան հանդէսի առիթով խօսած քարոզում վերոյիշեալ քահանայի անունն անգամ չէ յիշատակել։

Դոկտ. Կ. Փաշաեան – Խան
(Շարունակելի)

30 Սեպտ. 1903
Սալմաստ

ՄԱԿԵԴ. ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՆՊԱՍՏԻՑ ՑԱՆԶՆԱԴՈՒՄՈՎ

No. 16

Առ

Տ. Ատենապետ Պատ. Թաղ. Խորհրդոյ Հայոց Եկեղեցւոյ

Աստ

Մակեդոնացի դժբաղդ գաղթականներու համար կամաւոր նպաստ հաւաքող Վառնայի Ցանձնաժողովը, որ իմ նախագահութեանս տակ կը գտնուի, իր 21 հոկտեմբերի նիստին մէջ որոշեց ձեր միջոցաւ, Տիար Ատենապետ, յայտնել տեղւոյս Հայ հասարակութեան իր շնորհակալութիւնները, անկէ ի նպաստ մակեդոնացի գաղթականներուն ստացած 430,60 արծաթ և 91,20 ոսկի — ընդամէնը 521.50 լէվի գումարին համար։

Ցանձնաժողովին Նախագահ
Թաղապետ
Տ. Ն Փիւ-հրինկով

24 հոկտ 1903
Վառնա

«ԲԱՆԵՐ»

—o—

Վենետիկեայ հանդէս՝ Գրական և Գեղարուեստական, հրատարակութիւն Ա. Մելքոնեան ի Բեդերսպուրկ։

ԳՈՐԾԱԿԱԼ

Ռումանիայի, Պուլկարիայի և արտասահմանի ամէն երկիրներու համար

ԳԱՌՆԻԿ Դ. ՄԱԶՄԱՆԵԱՆ-ՐՈՒՍԶՈՒՔ

Այս գրական և գեղարուեստական հանդէսին՝ որուն Ս. հատորը լոյս տեսած է արդէն՝ մաքուր, տպագրութեամբ, գեղարուեստական ընտիր նկարներով և շահեկան պարունակութեամբ՝ կարժէ որ ամէն գրասէր հայ բաժանորդագրուի, որով իր գրադարանին մէջ կունենայ միշտ՝ թէ ընթերցումի համար յարմար ու օգտակար գիրք մը և թէ միանգամայն գեղարուեստական գործ մը։

Տարեգինն է 12 ֆր. իսկ իւրաքանչիւր գիրք առանձին կարժէ 7 ֆրանք։

ԳԱՌՆԻԿ Դ. ՄԱԶՄԱՆԵԱՆ-ՐՈՒՍԶՈՒՔ

Բացի «Բաներեր»էն՝ գործակալն է նաեւ «Մուրճ»ի «Հանդէս Ամսօրեայի» և այլ հայերէն ու ֆրանսերէն թերթերու, որոնց տարեգիններուն վճարումին համար դիւրութիւններ կուտայ ամէն անոնց՝ որ այդ դիւրութիւններու պէտք ունին։

ԳԱՌՆԻԿ Դ. ՄԱԶՄԱՆԵԱՆ-ՐՈՒՍԶՈՒՔ

Կը փութայ ծանուցանել նաեւ թէ՝ ինք միակ անձն է, որ Ռուսչուքի մէջ, մատնագիտօրէն կըզբաղի բոլորովին դատարկված է։

—Բայց մինչեւ ե՞րբ առանց կրակի կարող էք մնալ։

—Առանց կրակի չենք մնում, երբ անպատճառ կրակի պէտք ունենանք, աշխատում ենք միշտ ածուխ վառել չարտախների տակ, որպէսզի ծուխ չը բարձրանայ. պատասխանեց ծերուկը որ մի քիչ վախկոտ կերպով շարունակեց. «Ասուած սիրես հեռացիր այստեղից. դու ընկերութեան մարդ ես երեւում։ Շները հիմա շատ շատով են իմանում թէ ընկերութեան մարդիկ որտեղից են անցնում և իսկոյն հետեւում են»

Ծերունուն ոչինչ չը կարողացայ պատասխանել և անմիջապէս ճամբաս շարունակեցի, թէեւ չափազանց անօթի էի և մի կտոր հաց անգամ չունէի։ Այս գաւառը ամէնահայաշատ և մի քիչ անվախ գաւառներից մէկն էր. և այսօր այս վիճակին է հասել։

Ոմանք ասում են, որ սարսափի ազդեցութիւնը մի քիչ թուլանալուց յետոյ փախստականները ետ կրկին կը վերադառնան. բայց իմ հաւատալը չէ գալիս Մտադիր եմ հարեւան գաւառներն էլ այցելել. տեսնանք պիտի կարողանամ թէ ո՛չ։»

—Տեսնում ե՞ս, Շեւոտ, այստեղ բոլորովին ուրիշ բաներ է գրված։ Ոչ յուսաստու իրականութիւն։

Բայց դրանով ի՞նչ ես ուզում հասկացնել, Պետրոս, պէտք է լքե՞լ յեղափոխութիւնը, մի քիչ գրգռված միջամտեց Շեւոտեանը։

—Ոչ, չը պէտք է լքել, այլ լուրջ և շրջահայեաց պէտք է լինել։ Գործը շատ սուղի նստեց։ Անփորձ էինք, ներելի էր մեզ դիւրահաւատ լինել. բայց այժմ այլեւս ներելի չէ։ Իմ խիղճը տանջում է ինձ, աւելի ճիշտը սկսել է տանջել. մեծ ցաւ եմ զգում որ մենք անկարող ենք գտնուել մօտիկից ծանօթանալ այն երկրի և ժողովրդի հետ, որի փրկութեան համար աշխատում ենք։

(Շարունակելի)

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(14)

ՆՈՒԷՐ Ս. Զ.—ԻՆ

ԳԼՈՒԽ Գ.

Ես էլ նամակ եմ ստացել Գուրգէնից։ լսիր, կարդամ, տես ինչ է գրում։ և սա մի քիչ տարբերվում քո ստացած տեղեկութիւններից, սրանում գտնուած տեղեկութիւնները աւելի հաւատալի են, որովհետեւ իրականութեանը աւելի են համապատասխանում։

Նամակը հանելով գրպանից, մի քիչ դժուարութեամբ Շիֆրերը բանալով կարդում է.

«Միրելի ընկերներ,

Անտանելի դժուարութիւններ կրելով մի պտոյտ կատարեցի Ն. գաւառում, հաւաքելու համար թէ ժողովուրդը իրապէս ինչ վիճակի մէջ է գտնուում։ Ամբողջ նահանգը ամայացած է. գիւղերը բացարձակ մեռելութեան կնիք են կրում։ Ամէն քայլափոխում հրդեհուած և քանդուած տների մնացորդների ես հանդիպում, հայ բնակչութեան մի խոշոր մասը այս նահանգից թողել փախել է, մընացել են ծերերը, կիները։ Գիւղատեղերում, դուրսը, մի քիչ հեռու դեռ մնում են մորթուած հայերի դիակների մնացորդները. այսինքն ոսկորները, այն էլ ոչ ամբողջովին։ Գիւղական քնակարանների բուխարիներից առաւօտները գրեթէ ծուխ չէ երեւում. նշան որ ոչ հաց է թխվում և ոչ կերակուր եփվում։ Մի ծեր գիւղացու հանդիպեցի. հարցրի նրանից թէ ինչու՞ իրենց գիւղում կեանքի նշոյլ չը կայ. մանաւանդ որ այնտեղ կոտորած չէ եղել։ Նա պատասխանեց։ «Եթէ լինի, իսկոյն այդ նշոյլն էլ կը կտրեն։ Գիւղում մարդիկ կան, մեծ մասամբ կիներ, բայց կրակ չեն վառում, որովհետեւ լուր եկաւ թէ մօտակայ լեռներում քրդեր են երեւացել։ Մենք աշխատում ենք այնպէս ձեւացնել որ գիւղը բոլորովին դատարկված է։

—Բայց մինչեւ ե՞րբ առանց կրակի կարող էք մնալ։

—Առանց կրակի չենք մնում, երբ անպատճառ կրակի պէտք ունենանք, աշխատում ենք միշտ ածուխ վառել չարտախների տակ, որպէսզի ծուխ չը բարձրանայ. պատասխանեց ծերուկը որ մի քիչ վախկոտ կերպով շարունակեց. «Ասուած սիրես հեռացիր այստեղից. դու ընկերութեան մարդ ես երեւում։ Շները հիմա շատ շատով են իմանում թէ ընկերութեան մարդիկ որտեղից են անցնում և իսկոյն հետեւում են»

Ծերունուն ոչինչ չը կարողացայ պատասխանել և անմիջապէս ճամբաս շարունակեցի, թէեւ չափազանց անօթի էի և մի կտոր հաց անգամ չունէի։ Այս գաւառը ամէնահայաշատ և մի քիչ անվախ գաւառներից մէկն էր. և այսօր այս վիճակին է հասել։

Ոմանք ասում են, որ սարսափի ազդեցութիւնը մի քիչ թուլանալուց յետոյ փախստականները ետ կրկին կը վերադառնան. բայց իմ հաւատալը չէ գալիս Մտադիր եմ հարեւան գաւառներն էլ այցելել. տեսնանք պիտի կարողանամ թէ ո՛չ։»

—Տեսնում ե՞ս, Շեւոտ, այստեղ բոլորովին ուրիշ բաներ է գրված։ Ոչ յուսաստու իրականութիւն։

Բայց դրանով ի՞նչ ես ուզում հասկացնել, Պետրոս, պէտք է լքե՞լ յեղափոխութիւնը, մի քիչ գրգռված միջամտեց Շեւոտեանը։

—Ոչ, չը պէտք է լքել, այլ լուրջ և շրջահայեաց պէտք է լինել։ Գործը շատ սուղի նստեց։ Անփորձ էինք, ներելի էր մեզ դիւրահաւատ լինել. բայց այժմ այլեւս ներելի չէ։ Իմ խիղճը տանջում է ինձ, աւելի ճիշտը սկսել է տանջել. մեծ ցաւ եմ զգում որ մենք անկարող ենք գտնուել մօտիկից ծանօթանալ այն երկրի և ժողովրդի հետ, որի փրկութեան համար աշխատում ենք։

(Շարունակելի)

բաղի քաղքի գործերու տպագրութեամբ, (ծանուցագիր, շրջաբերական, նամակագրութիւն, փոխանակագիր, առեւտրական տոմսեր, այցաքարդ, հարսնիքի և ծնունդի հրաւիրագրեր, մահազդ եւայլն) որոնց մաքուր, գեղեցիկ ու ճաշակաւոր տպագրութեանը համար վերջերս ունեցած է տպագրական նորութիւններ՝ բոլորովին նորաճաշակ և քսաներորդ դարու մարդկային մտքի արտադրութիւններուն էն գեղեցիկներէն, ու հետաքրքրէ ալ ունենալու վրայ է։

Բացի քաղքի գործերէ կը տպագրէ նաեւ գիրքեր, հանդէսներ՝ նախանձելի մաքրութեամբ ու անմրձելի գիներով։

Գիտութիւնը ժողովրդականացնող և օգտակար հեղինակութիւններու և թարգմանութիւններու հրատարակութեանը համար մասնաւոր գիւրութիւններ կընծայէ ու կը տարածէ ղանոնք։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տարմշթատէն մեզ կը գրեն.

„Թիֆլիսէն մի վրդովեցուցիչ դէպք.

Թիֆլիսի առաջին գիմնազիայի 7րդ. դասարանի աշակերտները Հայ և Ռուս վճռել էին Գալիցինին չբարեւել իր արած գաղանութիւնների պատճառով։ Մի օր երբ նոյն դասարանցիներից մի խումբ զբօսնում էին, դրանց մօտով կառքով անցնում է Գալիցինը. աշակերտները իհարկ էն չեն բարեւում. Գալիցինը դրանց կանչում է իր մօտ և հարցնում է պատճառը. պատասխանում են. „Ձեզ հետ ծանօթ չենք“. „Ես ձեզ կը ծանօթացնեմ ինձ հետ“, ասում է և կառքը սլացնում։ Միւս օր գիմնազեայի վարչութիւնը պատւիրում է Գալիցինի կողմից իր պատկերը կախել 7րդ. դասարանում։

Երբ աղօթքից յետոյ նոյն դասարանցի աշակերտները ներս են մտնում. տեսնում են Գալիցինի պատկերը. „Փո՛ղ կորչի այդ անիծեալը“ կանչելով հանում են պատից պատկերը և պատռտելով ոտնակոխ անում։ Միւս օրը ամբողջ 7րդ. դասարանը որտաքսում է։ Ահա ձեզ մի պատկերս եւս Ռուս Գալիցիններին վարմունքից։“

Կովկասէն կը գրեն մեզ.

—Ով որ այստեղ ռուսերէն է խօսում նրանց պատժում են հետեւեալ կերպով. օրիորդներին ծամերը կտրումեն, պարոններին երեսը թանաք են քսում։ Այսպէս ամէն տեղ հայերէն են խօսում։

—Ատրպատականի առաջնորդ եղիշէ Վ. Մուրատեան Էջմիածին կանչուած է Խաֆրիզի Լիլաւայի դպրոցներուն մէջ կատարուած անկարգութիւններու վրայ բացատրութիւն տալու համար։

—Կիլիկիոյ կաթողիկոս Տ. Սահակ Սրբազանը պատրիարքարանի ուշադրութիւնը հրաւիրած է Կիլիկիոյ մէջ կատարուած լատինական պրոպագանդի վրայ և յայտնած, որ իրեն կը պակսին նիւթական միջոցներ՝ անոնց դէմ մրցելու համար։

—Մեր աշխատակից Պ. Եր. Ֆրանգեան Փայլուկի մէջ դպրոցական պաշտօնի կոչուած է։

Փայլուկ Բաֆֆիի ծննդավայրն է։

—Բուսչուքէն կը գրեն մեզ.

„Կեսարացի Արշակ Ա. Թորգոմ անուն մարդուկը, որ երկու ամիսէ իվեր քաղաքս կը սլքտար և կը ջանար ինքզինքը ներկայացնել իբր ուսանող և ազգային գործերով զբաղող մէկը, խաբեբայ մըն է։

Ան մարմնացումն է գռեհիկ և տգէտ իմաստակի մը, որ կը ստէ անպատկառ, կը խաբէ կեղծ առնելիքի մուրհակներ ցոյց տալով և իշարը կը գործածէ Եւրոպաի հայ ուսանողաց անունը և ապա գաղտագողի կը փախչի։

Ուստի թող զգուշանան ազգայինք այդ խաչագողէն, երբ ան իրենց կը ներկայանայ։“

—Հայրենիքի մէջ կը կարդանք.

„Սապահ-Գիւլեան-Կիւլէզեան դատը վերջացաւ։ Լեւոն Պետիկեան անպարտ արձակուեցաւ։ Սամուէլ Կիւլէզեան դատապարտուեցաւ բանտարկութեան Մասսաչուսէտցի նահանգային բանտին մէջ, 9էն մինչեւ 12 տարի։

Խե՛ղճ տղայ, անգիտակից զոհը անզգամ ու վատասիրտ դաւադիրներու։ Եղբայրասպանութեան ոճիրին ահաւորութիւնը եթէ չկրցան ըմբռնել այդ կեղծ յեղափոխականները, պիտի ուներնա՞ն գէթ խղճի պզտիկ խայթ մը որ իրենց գործիք դարձուցած ընկերոջ, երիտասարդական կեանքը խորտակելու պատճառը դարձան։ Կը կասկածինք։“

„Սապահ-Գիւլեան ստացած է պայթուցիկ նիւթերով լեցուն տուփ մը։ Ղրկողները ուզած են այդպիսով զինքը սպաննել, բայց բարեբաղդաբար եղբայրասպանութեան այս փորձը անյաջող անցաւ։“

—Կիմանանք որ Պ. Նաթան Ամիրխանեանց վերակազմած է „Գողթան“ երգեցիկ խումբը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ցանքով Լոնտոնի Պուլկարական գործակալը Սոֆիա կանչուած է։

—Ցեղի ունեցած ընտրութիւնները մեծ տհաճութիւն առաջ բերած են Ռուսիոյ մէջ։

Ռուսիա կը ցանկար որ կառավարութիւնը տապալէր և անցնէր Ռուսոֆիլներու ձեռքը։ Ռուս շովինիստ մամուլը կը յարձակի ներկայ կառավարութեան վրայ և խիստ քննադատելի կը գտնէ անոր ընթացքը։

—Կառավարութիւնը սկսած է արձակել զօրքը, զորս հաւաքած էր Թուրքիոյ դէմ պատերազմի մը վտանգը աչքի առաջ ունենալով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Սուլթանը նեղը մնացած նենգ միջոցներու սկսած է դիմել Մակեդոնիոյ նոր ծրագիրը չընդունելու համար։ Երբ Նաչովիչ, Պուլկարիոյ գործակալը, իր տարեգարձին առթիւ, շնորհաւորութեան գացած էր, Սուլթանը շատ զգացուած ցոյց տուաւ զինքը ու փափաք յայտնեց Պուլկարիոյ հետ համաձայնութեան գալով լուծել մակեդ. հարցը։

—Բոլոր պետութիւնները, Գերմանեան ալ միասին, դեսպաններուն միջոցաւ յայտնեցին որ իրենք համաձայն են Ռուս—Աւստրիական ծրագրին գործադրման։

—Եէմէնի մէջ ապստամբութիւնը զսպելու համար Զմիւռնեայէն փոխադրուած են նոր զորագունդեր։

- Թուրք պաշտօնեայ մը դէղի մը վրայ կենդանի վառած է մակեդոնացի հայդուկ մը։ Ռուս դեսպանին պահանջումով սկսած է գործին քննութիւնը։

ՌՈՒՍԻԱ

Քէօլ. Ցայթ. ին Բէթերսպուրկէն կը հեռագրեն, որ որոշ մը տագրութիւն կայ Կովկասի կառավարչապետ Գալիցինը հրաժարեցնելու՝ և անոր տեղ դնելու Կուրոպատկին։

—Ֆինլէնդի հրէասպանութեան մէջ ամբաստանուողներու Դատավարութիւնը սկսած է և կը կատարուի գաղտնի, որովհետեւ վկաները կուզեն հաստատել որ ներքին գործոց նախարար Բլէվէ և իր գործակալները նախապատրաստած են հրէաներու ջարդը։

—Ռուսիոյ ամէն կողմէ դժգոհ և յեղափոխական տարրը սկսած է շարժիլ և նորեն կենդանութեան նշաններ ցոյց տալ։

—Հռովմի Ռուսաց դէսպան Նելեդով ետ է կանչուեր. անոր տեղ խօսք կայ նշանակել Բարիզի Ռուսաց դեսպանը Ուրուսով։

ՍԵՐԲԻԱ

Մակեդոնացի հայդուկները այս օրերս խումբ խումբ կանցնին Սերպիոյ սահմանը։ Խմբապետ Միլքո 60 հոգիով գնաց Պելկրատ և կուզէ օգնութեան համար յանձնաժողով մը կազմել։

ԻՏԱԼԻԱ

Ելեւմտից նախարարը ինքնասպան եղաւ։ Երեկոյեան դեռ տեսակցած էր մի երեսփոխանի հետ ու գացած անկողին մտած։ Ժամը 6ին ելած նամակներ գրած է և ատրճանակով գինքը կուրծքէն վիրաւորած։ Նախաճաշը ներս բերող սպասուհին նախարարը գտած է մեռած, մեծ է եղած ընտանիքի սարսափը։

Հռովմի մէջ կը տիրէ յուզում։

ԱՆԳԼԻԱ

Երեք տարի շարունակելէ վերջ Լորտ Բէնրունի հանգային գործաւորները վերսկսան իրենց աշխատութիւնները։ Լորտը ոչ է գիջում չէ ըրած։

—Պալֆուր իր մէկ ճառին մէջ յայտնեց որ քաղաքական հորիզոնը այնքան ալ պայծառ չէ, չնայելով որ խաղաղութեան համար որոշ վտանգ մը չի սպառնար։ Ծայրագոյն արեւելքի խնդիրը առանց 'լուրջ հետեւանքի պիտի վերջանայ, որովհետեւ Զարը ունի խաղաղասիրական տրամադրութիւն և Ճաբոն խելացիութիւնը պիտի ունենայ ու բանի մը տեղի չպիտի տայ։ Գալով Մակեդոնիոյ խնդրին, երկու պետութիւնները գործադրել պիտի տան նոր ծրագիրը և այսպիսով պիտի գոցուի նաեւ Պալքանը լուզող այդ հարցը։

ՎԱՌՆԱՑԻ ՏՕՆ ԲԻՇՈՊԸ

Իբրեւ „զուարճալիք“ կարդալ „Իրաւունք“ թերթի չորեքշաբթուան թիւի նախայօդուածը՝ Հոն յարութիւն առած է միջնադարեան ասպետ մը՝ Տօն Քիշոտը, որուն սխրագործութիւններուն և յաւերժացումին նուիրուած է վերոյիշեալ ներբողական յօդուածը։

„Վա՛յ քեզ Բեդոսիթա, որ քու մարդարէներդ տգէտներ ու փարիսեցիներ են։“

Վահէ

30 Հոկտ. 1903
Վառնա

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна